

Բայց և այնպէս այդ գլխարկներով բերած հողերից մի ահագին բլուր կազմուեցաւ։ Այդպէս է ահա և կեանքի մէջ։ Եթէ մենք յանուն բարի գործի հաւաքուինք միասին, բաժին հանենք Աստուծոյ գործի համար, որպէս այրի կինը Աստուծոյ դանձանակի համար, դէթ մեր եռանդի մի կաթիլը, այն ժամանակ ամենուրեք՝ քաղաքներում՝ թէ գիւղերում, եսասիրութեան հարթութեան վրայ բարւոյ բլուրներ ու լեռներ կը բարձրանան։ Ի վաղուց հետէ կառուցուած է Աստուծոյ արքայութիւնը երկրի վրայ։ Ինքը Յիսուս դրեց այդ թագաւորութեան սկիզբը։ Առաքեալներն ու Քրիստոսի միւս սպասաւորները, բարւոյ մեծ հերոսները՝ նուիրեցին իրենց բոլոր ուժերն այդ գործին՝ Աստուծոյ ճշմարտութեան տաճարը երկրի վրայ կառուցանելու համար։ Ո՛վ ընթերցող, դ՛ու ևս ձգիր քո լուսման Աստուծոյ գործի համար։

Մամբրէ վարդապետ



ՆԻԻԹԵՐ Ս. ԳՐԸԻ ՈՒՍՈՒՄ ՆԱՄԻՐՈՒԹԵԱՆ

II.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳԼՈՒԽՆԵՐ

Երբ էջմիածնի միաբան երեանցի Ռսկան վարդապետը երկարամեայ աշխատանքներից յետոյ 1666 թուին յաջողեցրեց հայերէն Աստուածաշնչի անդրանիկ տպագրութիւնը, նա իրան թոյլ է տուել մի քանի շեղումներ

անել իւր ունեցած ձեռագրից, ի միջի այլոց չի տպագրել Հ. Կ. նախագորութիւնները և ցանկերը: Հ. Զոհրապեանը, ս. Գրքի երկրորդ հրատարակիչը, ընդհակառակն աշխատել է հայերէն ձեռագրերի տուածը ճշտութեամբ վերարտադրել և իւր 1805 թ. տպագրութեան մէջ Հ. Կ. իւրաքանչիւր գրքի սկզբում տպել է համապատասխան ցանկերն ու նախագորութիւնները: Յունարէն, ասորերէն և լատիներէն բնագրերում չկան այդ յաւելումները. Զոհրապը կարծել է թէ գտնէ ցանկերը կան ասորի բնագրի մէջ և մեղադրում է Ոսկանին, որ չէ տպագրել այդ յաւելումները, այլ «իբր աւելորդս և անպիտանս՝ արհամարհեալ զանց արար»: Այդ յաւելումների ծագման մասին այսպիսի կարծիք ունի Զոհրապը. «զբազմահմուտ հեղինակ բանիցս՝ ըստ մասին հին կտակարանաց, ապաքէն ի հայկազանց ազգի մերոց արժան էր համարել, նկատեալ ի վայելուչ հայկաբան արտագորութիւն շարագրութեանն՝ հանդերձ այլ ևս սեպհական ինչ նշանօք»¹⁾, բայց չբաւականալով այդբանով, որոնում է և կարծում է, թէ գտել է ասորի բնագիր և գրանով սխալի մէջ է ընկել ինքը և իւր հետ սխալեցրել է շատերին: Նա վերջում է, որ իրեն յաջողուել է «աւանատես լինել յԱմբրոսեանն գրատան ի Մեղիոլան» մի ասորի ձեռագրի, թարգմանուած յունական եօթանասնից բնագրից, որը իբր թէ «ի սկիզբն անցնիւր գրոց ունէր կարգեալ զցանգ զլսոց, որ գրեթէ բառ առ բառ համեմատ էր ընդ մերումս, այլ պակասէին ի նոսա նախագորութիւնը»: Եւ ինչ զարմանալու բան, որ այդօրինակ գրական ցուցումից յետոյ շատերը վճռուած կհամարէին այդ խնդիրը և մինչև անգամ ակներև հակառակ փաստերը կլծողնէին առանց ուշագրութեան:

Ասածիս ապացոյց Հ. Գարեգին Զարբանալեանի աշխատութիւնները: Սա, չնայած որ իւր Պատմ. Հ. Գլ. մէջ (Բ. տպ. էջ 701, Գ. տպ. էջ 722) գրում է, թէ Գեորգ

Սկեռացին «Առնէր Համարս զիսոց և Յանկի և Նախա-
դրութիւնս Աստուածացից սառից», — փոխանակ իրեն
հարց տալու և որոնելու, թէ ինչ ցանկերի կամ նա-
խադրութիւնների մասին է խօսքը, — իւր Հ. Թ. Ն. (էջ 172,
173) կրկնում է Զոհրապի միտքը. «Այս նախադրութեանց
ու անոնցմէ ետքը անմիջապէս գրուած ցանկերու յունա-
կան սկզբնագիրը գեռ գտնուած չէ... Ուստի կրնանք
կարծել թէ ի մերոց յօրինուած ըլլան, և կամ նմանու-
ղութեամբ յոյն լեզուով շարագրուած նման գրուածի մը՝
որ կամ իսպառ անհետացած է և կամ գեռ յայտնուած
չէ: Յօրինման և շարագրութեան ոճն թուին հաւատար-
մացնել, թէ բուն ազգային ըլլան (էջ 173)»: Հ. Զարա-
նալեանը վերջի նախադասութեամբ արդէն ուղիղ միտք է
յայտնում, որ թուլացրել է գրքի յաւելուածի (էջ 757)
մէջ կրկին դառնալով Զոհրապից յիշատակած ասորի բը-
նագիրին ¹⁾: Պարզ է, որ ինքը չէ քննել այդ խնդիրը և
նրա մասին դրական կարծիք չի ունեցել:

Նախ քան մեր դիտողութիւնները առաջ բերելը, յի-
շատակենք երկու կարևոր հեղինակների կարծիքներ ևս.
Հ. Ա. Սուքրին ենթագրել է, որ ցանկերն ու նախա-
դրութիւնները գրել է Եւսեբիոսը ²⁾, իսկ Ն. Բիւզանդը ³⁾

1) Մենք փորձեցինք տեղեկութիւն հաւաքել Զոհրապի յի-
շատակած ասորի բնագրի մասին: Միլանի Ամբրոսեան գրատան
ասորերէն մի ձեռագիր տպագրուել է 1788 թ., մեզ չյաջողուեց
տեսնել այդ հրատարակութիւնը, սակայն մեր ձեռքն ընկաւ
նրա մանրամասն նկարագրութիւնը (Field, Origini Hexaplarum quae
supersunt, II, 906) և դրա մէջ չկայ յիշատակութիւն Զոհրապի
տեսած ցանկերի: Ամբրոսեան գրատան ձեռագրի մասին խօ-
սում է նաև Վ. Բայարը (В. Райт, Краткий очеркъ истории
Сирійской Литературы, СПб. 1902 стр. 11. прим. 3), առանց
մի բան յիշելու ցանկերի մասին:

2) Աստուածաշունչ. թարգմանութիւն Եօթանասնից և
հոյկականն և ամբողջութիւն Նոր-Կտակարանի, Բաղմալէպ,
1897, 202 էջն:

3) Կորինն վարդապետ և Նորին թարգմանութիւնը, Տըփ-
լիս, 1900, էջ 422—432:

մեծ ջանք է դորժ դրել ապացուցանելու, որ հայերէնը ինքնուրոյն չէ, այլ անպատճառ թարգմանուած է, այն էլ ասորերէնից։ Ուշագրութեան արժանի է սորա կարծիքը, ոչ թէ նրա համար որ ուղիղ է, այլ նրա ընտրած մեղօթի տեսակէտից։ Նա իւր «Կորին վարդապետ և Նորին թարգմանութիւնը» գրքի մէջ իւրատեսակ մի հանապարհ է ընտրել, որովհետեւ ամեն ճիգ և աշխատանք թափում է, գրական կնճռոտ խնդիրները պարզաբանելու համար ամենագլխաւոր կռուանք համարել լեզուն՝ բառերի և սճերի կիրառութիւնը։ Թէ որքան է նա յաջողել իւր միւս վարկածներում՝ Կորինին վերագրելով Մակարայեցւոց գրքերի, Եւթաղ Աղէքսանդրացու, Ագաթանգեղոսի և Փաւստոս Բիւզանդի թարգմանութիւնը, այդ այստեղ մեզ չի հետաքրքրում, միայն նրա կարծիքը Հ. Կ. նախագրութիւնների և ցանկերի վերաբերմամբ հիմնովին սխալ է։ Սա ևս Զոհրապի և Զարեանաւեանի պէս գրել է՝ «Ոմանք յայս նախագրութեանց թուին արդարեւ գրեալք ի հայ եկեղեցականէ» և դարձեալ նոցա պէս սխալի մէջ ընկնելով, հեռացել է ճշմարտութիւնից—«կարելի է, հայ եկեղեցականն առաջնորդ ունէր (ասորական) սկզբնագիր մի» բայց ձգտելով նոցանից առաջ անցնել, շարունակում է հաստատել, որ արտաքին ուներքին զօրաւոր պատճառներ պիտի կարծել տան «թէ Հ. Կ. բազում նախագրութեանց և գլխոց սկզբնագիրն ասորական եղած է (և ոչ յունական ըստ Հ. Գ. Զ.)»։ Արտաքին պատճառներից առաջինը նա համարում է այն, որ Եփրեմ Ասորին ունեցել է մի քանի գրքերի նախագրութիւններ, իսկ երկրորդը՝ Զոհրապի յիշած Ամբրոսեան դրատան ասորի ձեռագիրը։ Ներքին պատճառը համարում է նախագրութիւնների և ցանկերի լեզուի մէջ առաջ եկող ասորաբանութիւնները, որոնց բազմաթիւ օրինակները մանրակրկիտ փութաջանութեամբ թուում է իւր գրքի շտանթութեան մէջ։

Ուշագրութեան արժանի է նաև Նորայրի կարծիքը ժամանակի մասին. «Ժամանակ գրութեան նախագրութեանց և գլխակարգութեանց թէ Հին կտակարանին և

Սկիզբին «Առնէր Համարս զլիսց և Յանկի և Նախադրութիւնս Աստուածաբանից ատից», — փոխանակ իրեն հարց տալու և որոնելու, թէ ինչ ցանկերի կամ նախադրութիւնների մասին է խօսքը, — իւր Հ. Թ. Ն. (էջ 172, 173) կրկնում է Զոհրապի միտքը. «Այս նախադրութեանց ու անոնցմէ ետքը անմիջապէս գրուած ցանկերու յունական սկզբնագիրը դեռ գտնուած չէ . . . Ուստի կրնանք կարծել թէ ի մերոց յօրինուած ըլլան, և կամ նմանողութեամբ յոյն լեզուով շարագրուած նման գրուածի մը՝ որ կամ իսպառ անհետացած է և կամ դեռ յայտնուած չէ: Յօրինման և շարագրութեան ոճն թուին հաւատարմացնել, թէ բուն ազգային ըլլան (էջ 173)»: Հ. Զարբանալեանը վերջի նախադասութեամբ արդէն ուղիղ միտք է յայտնում, որ թուլացրել է դրքի յաւելումի (էջ 757) մէջ կրկին դառնալով Զոհրապից յիշատակած ասորի բընադրին ¹⁾: Պարզ է, որ ինքը չէ քննել այդ խնդիրը և նրա մասին դրական կարծիք չի ունեցել:

Նախ քան մեր գիտողութիւնները առաջ բերելը, յիշատակենք երկու կարևոր հեղինակների կարծիքներ ևս. Հ. Ա. Սուքրին ենթադրել է, որ ցանկերն ու նախադրութիւնները գրել է Եւսեբիոսը ²⁾, իսկ Ն. Բիւղանդը ³⁾

1) Մենք փորձեցինք տեղեկութիւն հաւաքել Զոհրապի յիշատակած ասորի բնագրի մասին: Միլանի Ամբրոսեան գրատան ասորերէն մի ձեռագիր տպագրուել է 1788 թ., մեզ չյաջողուեց տեսնել այդ հրատարակութիւնը, սակայն մեր ձեռքն ընկաւ նրա մանրամասն նկարագրութիւնը (Field, Origini Hexaplarum quae supersunt, II, 906) և դրա մէջ չկայ յիշատակութիւն Զոհրապի տետած ցանկերի: Ամբրոսեան գրատան ձեռագրի մասին խօսում է նաև Վ. Բայարը (В. Райтс, Краткий очерк истории Сирийской Литературы, СПб. 1902 стр. 11. прим. 3), առանց մի բան յիշելու ցանկերի մասին:

2) Աստուածաշունչ. թարգմանութիւն Եօթանասնից և հայկականն և ամբողջութիւն Նոր-Վատկարանի, Բագմալէպ, 1897, 202 էջն:

3) Կորիւն վարդապետ և Նորին թարգմանութիւնը, Տըփ-խիս, 1900, էջ 422—432:

մեծ ջանք է դործ դրել ապացուցանելու, որ հայերէնը ինքնուրոյն չէ, այլ անպատճառ թարգմանուած է, այն էլ ասորերէնից։ Ուշագրութեան արժանի է սորա կարծիքը, ոչ թէ նրա համար որ ուղիղ է, այլ նրա ընտրած մեղոթի տեսակէտից։ Նա իւր «Կորին վարդապետ և Նորին թարգմանութիւնը» գրքի մէջ իւրատեսակ մի ճանապարհ է ընտրել, որովհետեւ ամեն ճիգ և աշխատանք թափում է, գրական կնճռոտ խնդիրները պարզաբանելու համար ամենագլխաւոր կռուանը համարել լեզուն՝ բառերի և սճերի կիրառութիւնը։ Թէ որքան է նա յաջողել իւր միւս վարկածներում՝ Կորինին վերագրելով Մակարայեցւոց գրքերի, եւթաղ Աղէքսանդրացու, Ագաթանգեղոսի և Փաւստոս Բիւզանդի թարգմանութիւնը, այդ այստեղ մեզ չի հետաքրքրում, միայն նրա կարծիքը Հ. Կ. նախագրութիւնների և ցանկերի վերաբերմամբ հիմնովին սխալ է։ Սա ևս Զոհրապի և Զարբանալեանի պէս գրել է՝ «Ոմանք յայս նախագրութեանց թուին արդարեւ գրեալք ի հայ եկեղեցականէ» և դարձեալ նոցա պէս սխալի մէջ ընկնելով, հեռացել է ճշմարտութիւնից—«կարելի է, հայ եկեղեցականն առաջնորդ ունէր (ասորական) սկզբնագիր մի» բայց ձգտելով նոցանից առաջ անցնել, շարունակում է հաստատել, որ արտաքին ու ներքին զօրաւոր պատճառներ պիտի կարծել տան «թէ Հ. Կ. բազում նախագրութեանց և գլխոց սկզբնագիրն ասորական եղած է (և ոչ յունական ըստ Հ. Գ. Զ.)»։ Արտաքին պատճառներից առաջինը նա համարում է այն, որ եփրեմ Ասորին ունեցել է մի քանի գրքերի նախագրութիւններ, իսկ երկրորդը՝ Զոհրապի յիշած Ամբրոսեան գրատան ասորի ձեռագիրը։ Ներքին պատճառը համարում է նախագրութիւնների և ցանկերի լեզուի մէջ առաջ եկող ասորաբանութիւնները, որոնց բազմաթիւ օրինակները մանրակրկիտ փութաշնութեամբ թուում է իւր գրքի շփանթութեան մէջ։

Ուշագրութեան արժանի է նաև Նորայրի կարծիքը ժամանակի մասին. «Ժամանակ գրութեան նախագրութեանց և գլխակարգութեանց թէ Հին կտակարանին և

նորոյն՝ թուի կատարած հինգերորդ գործն կամ սկիզբն վեցերորդին, յորում վաղուց խամբեալ էր առաջին աշակերտաց աննման հայ լեզուն և կտիրէր նորահնար հայերէնն երկրորդ աշակերտաց» (Կոր. Վ. էջ 429)։

Այժմ ծանօթանանք այն փաստերի հետ, որոնք, մեր համոզմամբ, անհերքելի կերպով լուծում են այդ խնդիրը առանց ենթադրութիւնների և նորից ապացուցանում այն անհերքելի ճշմարտութիւնը, թէ ամենալաւ և սրամիտ կարծիքներից գերազասելի է, դոնէ երբ հնար է, պարապել սկզբնաղբիւրների ուսումնասիրութեամբ։ Այս անգամ այդ աղբիւրների մի մասը հրատարակուած և հրապարակի վրայ էր դրուած, որոնցից կարող էին օգտուել Հ. Զարբանալեանն ու Ն. Բիւզանդացին, կային այնպիսիներն էլ, որ ծանօթ չէին դոցա։ Կարեւորագոյն աղբիւրը Մովսէս Երզնկացի վարդապետի վերեւ յիշած վկայութիւնն է՝ տպագրուած Ալիշանի Սխուանում (էջ 103, 104) և Հ. Զարբանալեանի Պ. Հ. Դ. (էջ 700, 701) մէջ, Այդ վկայութիւնը առաջ կրեւերնք ամբողջութեամբ։

«Գծէր և կանոնս կարգաւորս», ասուած է Գէորդ վարդապետ Սկիւացու մասին, «և բանս խրատականս վասն խոստովանութեան առ ի յօգուտ տգիտաց քահանայից. առնէր Համարս զլիսոց և Յանկի և Նախադրութիւնս Աստուածաշնչից տառից. գրէր և ճառս ներբողականս ի պատիւ սրբոց. առնէր և Համառօտ Մեկնութիւն Գործոց Առաքելոցն ի խնդրոյ Արքայեղբօրն՝ Յովհաննու . . . Բազում բանս պիտանիս հաւաքէր ի գանձուց աստուածայնոց, առ ի վարժումն մանկանց նորագունից»։

Այս գեղեցիկ յիշատակութիւնը, որի նմանը շատ քիչ գրողների մասին ունինք, առանձին մեկնութեան կարօտ չէ. Մովսէսը թուում է իւր ուսուցչի գրական փաստակները և գրական կերպով վկայում է, որ նա ի միջի այլոց գրել է Համար զլիսոց, Յանկի և Նախադրութիւնք Աստուածաշնչի. Հ. Զարբանալեանը և Ն. Բիւզանդացին այդ պարզ լուծումը աննկատելի են թողել. Հ. Զոհրապեանը և Սուրբին հաւանական է չեն տեսել Մովսէսի գրութեանը։

Բայց Զարբանալեանն ու Բիւզանդացին չեն կամեցել տեսնել նաեւ մի ուրիշ յիշատակարան։ Բազմազեպում¹⁾, աւելի ընդարձակ քան Զարբանալեանի²⁾ մօտ, նկարագրած է Վենետիկի մի ձեռագիր Աստուածաշունչ, ԺԳ — ԺԴ դարու, գրուած Բարսեղ և Դէորդ գրիչներից թորոս քահանայի համար և այդ ձեռագրի մէջ կայ հետեւեալ յիշատակարանը. «Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, զթառորմեա Գէորգ վարդապետին որ զնախադրութիւններս և զգլխնիս ամեն Հին կտակարանացս է շինել, և զՄարտիրոս վարդապետն որ դաւրինակն ետ»³⁾։

Ձեռագրի ցուցակագրողը, անկասկած աւանդական կարծիքների ազդեցութեան տակ, չի փորձել հասկանալու այդքան պարզ գրութեանը և յիշատակարանի վերջում հարցական նշան դնելով, արտայայտել է իւր կասկածը նրա մասին։ Խոստովանում ենք, որ գուցէ մեր ուշադրութիւնից էլ վրիպէին այդ կրկնակի տեղեկութիւնները, եթէ Մովսէսի մի քանի բացորոշակի յիշատակութիւնները չլինէին։ Ինչպէս չէ՞ր մենք վերեւ առաջ բերինք,⁴⁾ որի մէջ ասուած է թէ նախնիք Հ. Կ. համար ցանկեր և նախադրութիւններ չէին շինել, այլ այդ գործը կատարել է իւր բարունապետը։ Ահա բուն յիշատակարանը.

«Ով եղբարք և ծառայակիցք, որք գայք զկնի մեր և հանգիպիր մերումս շարադրութեան, այս ձեզ յայտնի լիցի, զի թէ յանցնիւր տեղւոյն ոչ է եղեալ գլխահամար իւրաքանչիւր գլխոց, այս է պատճառն։ Զի ի մերումս ժամանակի հնոցն արարած ոչ գտաւ գլխահամար աստուածաշնչից գրեմաց և որ մերն էր բարունապետ՝ է զոր յինքենէ շարժեալ և է զոր ի մէնջ թախանձեալ եղև, եւ զայսօսիկ յորժամ արար՝ ի գրոցս սուղ ինչ կայր գրելոյ, և ուր տեղի գտար եղար, ուր ոչ՝ լուր ժողովեցար առ ի պէտաս»⁵⁾։

1) 1891, էջ 97—100;

2) Հ. Թ. Ն. էջ 151—156;

3) ИПБ и АЯ էջ 146 և Բազմազեպ, 1891, էջ 99;

4) Արարատ, 1904 հ. Բ. էջ 131.

5) ИПБ էջ 111.

Այդ յիշատակարանի մէջ մենք առանձին կարեւորութիւն ենք տալիս Մովսէսի վերջի խօսքերին՝ թէ ցանկերը գրելու ժամանակ իւր ձեռագրի մեծ մասը վերջացած էր և ապա տեղ չիլ էր մնացել, ուստի ստիպուած «ուր տեղի գտար եղար՝ ուր ոչ՝ լուր ժողովեցար»:

Եւ խկապէս գլուխների և նախադրութիւնների մեծաւոյն մասը գրուած է ձեռագրի սկզբում և վերջում, նոր աւերացրած թերթերի վրայ: Մովսէսը, ինչպէս պարզ երևում է, լաւ գիտէր, որ իւր արածը ուղիղ է, ուստի զգուշացնում է յետագայ արտադրողներին՝ տալով հետեւալ բացորոշ խրատը:

«Թէ որ կամեսցի գրել, յառաջ գնախադրութիւնս գրեսցէ և ապա զգլխահամարսն սկզբան ամենայն գրոց»:

Համանման խրատ գտնում ենք Էջմիածնի մի ուրիշ ձեռագրում, Հեթում թագաւորի համար գրուած Աստուածաշնչի մէջ (№ 157 կամ հին համար 151), որի գրութեան թուականը 1295 է: «Ով որ ընթեռնու կամ աւրինակէ զգիրքս զայս՝ նա թող յառաջ գնախադրութիւնս գրէ և ապա զցանկքն, զի յետ շինեցաւ նախադրութիւնս քան զգրոցս գրելն, նա եւ այնոր համար յետև գրի: Ապա որ գրէ, նա թող զամէն նախադրութիւններն յառաջ գրէ, ինչփի յաւետարանն, ու այնկից ընդ այն թող հայնց գրէ զկաթողիկէիցն ու զառաքելին զին(չ) ցեղ գրած է և զիս զմեզաւոր զՍտեփաննոսս յիշեա անմոռաց զի խիտ աշխատեցայ»¹⁾:

Այս յիշատակարանը բացատրութեան կարօտ է: Ձեռագրի գրութեան թիւը 1295 է, մինչդեռ ինչպէս տեսանք գրանից երեք տարի առաջ գրած Ստ. Գոյներ Երիցանցի ձեռագրում ցանկերն ու նախադրութիւններն արդէն կան, այն էլ ուղիղ իրենց տեղերում: Այստեղից պիտի եզրակացնել, որ կամ Հեթումի ձեռագիր գրողը իւր բնագրից է յիշատակարանն առանց փոխախտութեան ընդօրինակել:

1) ИИБ и АН, № 117, 118:

կամ, որ աւելի հաւանական է, թէ՛ Է Զեռադիրը ունի 1295 թուականը, նա խկապէս աւելի շուտ է սկսուել, այսինքն աւելի շուտ քան նախադրութիւնների գրութիւնը և Առեւփանոս գրչի ձեռք հասնելը:

Ի մի ամփոփելով մեր յիշատակած տեղեկութիւնները, գտնում ենք, որ մինչև Մովսէս վարդապետի (Էջմիածնի Ձեռ. թիւ 153), Հեթում թագաւորի (Էջմիածնի Ձեռ. թիւ 155) և Թորոս քահանայի (Վենետիկի Ձեռ. թիւ 841) ձեռագրերի գրութիւնը, սոցա գրիչների միասնայն վկայութեամբ գոյութիւն չունէին նախադրութիւններ և ցանկեր, և յետոյ գրել է Գեորգ (Վենետիկի Ձեռագիր) բարունապետը (Էջմիածնի Ձեռագիր): Մովսէսը և Վենետիկի ձեռագրի բնագրի գրիչ Մարտիրոսը Գեորգի աշակերտներն էին, հետևապէս նոցա վկայութիւնը անպայման ծանրակշիռ է: Արդո՞ղ վկան, Հեթում թագաւորի Աստուածաշնչի գրիչ Ասեփաննոսը՝ իրրև Կիլիկեցի և ժամանակակից Մովսէսին և Մարտիրոսին, գուցէ սոցա չափ մօտ էր Սկեռացուն և հետևապէս պակաս արժէք չունի նաև նրա վկայութիւնը: Այս փաստերի վրայ աւելանում է Մովսէսի այն գրածը, որը Աղիշանն է առաջ բերել, գծրախտարար, առանց քաղուածքի աղբիւրը ցոյց տալու:

Այս վկայութիւններից պակաս զօրաւոր չէ այն փաստը, որ 1292-ից առաջ գրուած ձեռագրերը չունին ցանկեր և նախադրութիւններ և եթէ նոցա մէջ պատահում են, յետոյ են աւելցրուած, օրինակ Յովհաննէս արքայազոր 1270 թ. գրուած ձեռագրում: Այս առթիւ բանասէրների ուշադրութիւնն ենք հրաւիրում մի քանի ձեռագրերի վրայ, որոնք ժամանակով 1292 թուից առաջ են և որոնց մանրամասն նկարագրութիւնը մեր ձեռքում չէ եղել. ա) Արուստպէմի ՈԽԸ թուի, բ) Արուստպէմի ՁԺԸ թուի, գ) Կառւց վանքի ՁԼԴ և դ) Արուստպի ՁԼԴ թուի օրինակները, որոնց բովանդակական նկարագրութիւնը մեր

գրականութեան մէջ խիստ պակասաւոր է և որոնց քըն-
նութիւնը կժառայի ոչ միայն մեր ասածը ստուգելու, այլ
դուցէ նաև կնպաստի որոշելու ամենահին թուականը երբ
Սկեռացու յաւելուածները տեղ են բռնել ս. Գրքի ձե-
ռագրերում: Էջմիածնի մատենադարանում՝ ձեռագրական
նիւթը մեր նպատակի համար միանգամայն զոհացուցիչ
է. այսպէս՝ համար 203 (հին համար 196) 1207 թուին
գրուած, հ. 154 (հ. հ. 148) 1253—1255 թուին, հ. 1056
(դ)-1263 թ., հ. 191 (հ. հ. 185)-1269 թ., հ. 155 (հ. հ.
149)—1270 թ. և հ. 944 (հ. հ. 922)—1272—1288 թ. ¹,
հետևապէս 6 հին օրինակ չունին ցանկեր և նախագրու-
թիւններ:

Վերջին հաստատուն կռուանք պէտք է ապ Գէորգ
Սկեռացու դործածած նիւթերի աղբիւրների ուսումնա-
սիրութիւնը: Այդ այնքան էլ թեթեւ աշխատանք չէ,
մանաւանդ ի նկատի ունենալով, որ մեր գրականու-
թեան մէջ աստուածաբանական և մեկնաբանական ճիւ-
ղերը համարեա թէ բարձի թողի և առանց ուշադրու-
թեան են մնացած և ով փորձի այդ աղբիւրները որոնե-
լու, բաւական դժուարութիւնների կպատահի: Սկեռացին
ցանկերը գրելիս կրկնակի ձե է դործ գրել. նա կամ
սուրբ Գրքի հատուածների բովանդակութիւնն է տուել,
մի տեսակ վերնագիրներ կազմելով, ինչպէս մենք ենք
հասկանում և կամ թէ, ցանկի կամ աւելի ուղիղ՝ վեր-
նագրի մէջ համապատասխան հատուածի այլաբանական,
դուշակութիւն պարունակող միտքն է տուել: Վերջի եղա-
նակի կիրառութեան ժամանակ նա, ինչ հարց, օգտուել
է իւր ժամանակի կրօնական գրականութիւնից և անշահ
չէր լինիլ որոնել այդ աղբիւրները:

Այդպիսի աղբիւրներ Սկեռացին ունեցել է նաև նա-
խագրութիւնները գրելիս և մինչև անգամ յիշում է մի
քանիսը: Օրինակ Յուդիթի գրքի նախագրութեան մէջ
գրում է. «Ասէ եւսերի ի քրօնիկօնին»: Արդէն ն. Բիւ-

¹ Տե՛ս ИРБ էջ 152, 82, 83, 152, 85,—92, 99.—97 101.

զանգացին ցոյց է տուել (Կորին, էջ 422), որ քրոնիկոսնից բերած վկայութիւնը առնուած է հայ թարգմանութիւնից և ոչ թէ յունարէն բնագրից: Դարձեալ Բիւզանդացու ցուցմամբ՝ փոխառութիւններ կան Կորինից, Սուտ Կալիսթենէսի Ազէքսանդրի պատմութիւնից, Գրիգոր Նազիանզացուց և Մովսէս Խորենացուց: Այս աղբիւրներին մենք կգառնանք, այժմ՝ հարկաւոր եմ համարում քննել մի նախադրութիւն, որի ոչ միայն աղբիւրն է յայտնի, այլ միևնոյն ժամանակ նոր կռուան է, որ նախադրութիւններն իսկապէս ժ.Գ դարում են կազմուել:

Գոչ Մխիթար վարդապետի անունով պահուած կայ Մեկնութիւն Մարգարէին Երեմիայ, որից Էջմիածնում երկու բաւականի հին օրինակ ձեռագիր կան. թիւ 1253 (հ. հ. 1223) 1283 թուից և թիւ 1258 (հ. հ. 1228) 1223 թուից: Հ. Զարբանալեանը այս աշխատութեան մասին գրում է. «Այս մեկնութիւնը ոմանք ուղեցին Ասողկայ ընծայել, ինչպէս առաջ յիշատակեցինք (էջ 536, 537), բայց գրուածքին ոճն ու լեզուն աւելի կհաւատարմացընեն անոնց կարծիքը, որոնք Մխիթարայ կընծայեն» (Պ. Հ. Դ. բ. տպ. էջ 673): Սակայն այդ կարծիքներից ոչ մէկն էլ ուղիղ չէ և հաղիւ թէ Հ. Զարբանալեանը ձեռին ունեցած լինի բուն գրուածքը և նրա «ոճին ու լեզուն» ծանօթացած: Որովհետեւ եթէ նա գրուածքը կարդացած լինէր, կտեսնէր, որ այդ մեկնութիւնը Յովհան Ոսկեբերանինն է, թարգմանուած է եղել շատ շուտ և չէր օրոնիլ նրա հեղինակին: Այդ հիման վրայ բառացի պիտի հասկանալ Մագիստրոսի առ Գէորգ վարդապետն գրուած թղթի միտքը, ըստ որում «բանս հայցէ ի քէն զմեկնութիւն Երեմիայի մարդաշէի, զոր գրեալն է Ասողկայ երջանիկ ծայրագոյն ծերոյ՝ շնորհել մեզ»: Ասել է Մագիստրոսը իմացել է որ Ասողիկը ծերութեան հասակում իւր ձեռքով արտագրել է Երեմիայի Մեկնութիւնը, հեղինակութիւն Յովհան Ոսկեբերանի և Մագիստրոսը այդ ձեռագիրն է խնդրում Գէորգ վարդապետից:

Իսկ թէ որտեղից գիտենք, որ Երեմիայի Մեկնու-

Թիւնը Ոսկերերանի գրուածն է, այդ մասին ունենք Մխիթար Գոշի հետեւեալ վկայութիւնը՝ Մեկնութեան նախաբանում. «Զի թէպէտ և սուրբ հօրն Յովհաննու Ոսկերերանի առ ձեռն կայր Մեկնութիւն այսմ՝ մարգարէութեան, սակայն յօրինակէ և գրողէ յոյժ ապականեալ հատակոտոր լեալ ի բազում տեղիս. ուստի և յաճախութիւն բանին սրբոյն (Յ. Ոսկերերանի) տաղտկալի և չաղփաղփ եղեալ ի զղուանս գայր ընթերցողաց։ Յաղագս որոյ չափաւորել և յղկել ախորժեցաք»։ Այդ խմբագրական և սրբագրչի գործը կատարելէ Մխիթարը, ոչ այնքան ներքին գրդմամբ, այլ աւելի զիջանելով «յեղբարց որք այժմ՝ ընդ մեզ աղաչեցեալ յաւժարեցաք»։

Այժմ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Գէորգ Սկեռացին երեմիայի նախագրութիւնը գրելիս օգտուել է Յովհաննու Մեկնութիւնից և որովհետեւ պատահամբ օգտուած մասը կայ հին, Մխիթարից չփոփոխուած թարգմանութեամբ¹⁾, ուստի բազդատելով երեքն ի միասին, այսինքն նախագրութիւնը, հին թարգմանութիւնը և Մխիթարի խմբագրութիւնը, գտնում ենք, որ Սկեռացին օգտուել է խմբագրից։ Ըղթերցողին համոզելու համար դընենք այդ համեմատութիւնը։

Յառաջաբանսիրին	Մեկնութիւն բոս Մ.	Հասուած բոս գիրք
Երեմիա մարգարէի,	Գոշի	Պատճառաց ձեռագրի
		(բ. 1650).

Երեմիա սկսաւ մարգարէանալ յերեքսասան ամէն յովսիա. մինչեւ ի մեծսան ամն Սեղիկիա յորում առաւ երուսաղէմ, որ լինին ամբ քա-	Մարգարէացաւ երեմիայ յաւուրս թագաւորութեանն Ովսիայ . . . սկիզբն արարեալ յերեքսան ամն անտի նորա մինչեւ ի մեծսան ամն	Երեմիա . . . յետոյ քան զյոլովս ի մարգարէիցն մարգարէացաւ յաւուրս Ովսիայ . . . մարգարէացաւ երեմիաս յերեքսասան ամն ի նորին թագաւորու-
--	---	--

1. Այդ հատուածը կայ Գրեգորի սրղի Աբասայ Պատճառաց գրքի մէջ, որի ընտիր ձեւագիրը կայ Էջմիածնի մատենադարանում (թիւ 1650), իսկ արտագրութիւնը Վիեննայում։ Համեմատելը ИПБ и АЯ, էջ 226—237 և Հ. Յ. Տաշեան, Յուլյակ Հ. 2. Մ. Մ. ի Վիեննա, էջ 213—233.

ռասուն. յառուես յայտ-
րիկ էր եւ Սովինիա եւ
Ուրիա Սամիա եւ Ող-
դան կին մարգարէ:

Սեղեկայ, որ է վերջին
գերութիւն Յուդայ եւ
լինին ամբ Դաւաթուն,
Յառուես սորա մարգա-
րէանայր ի Հրէաստանի
Սովինիա եւ Ուրիայ Սա-
մեայ եւ Ողդան կին բա-
րէպաշտ:

Թեանն եւ մինչ ի քառա-
սուն ամ եկաց ի մարգա-
րէանայն: Յառուես սորա
մարգարէանայր ի Հրէաս-
տանի Սովինիայ եւ Ու-
րիա Սամիայ եւ Ողդիա
կին բարէպաշտ

Եւ զկնի սոցա եւ առ
սորաւք Դանիէլ եւ Եզե-
կիէլ. զի որոց առ գե-
րութեամբն մարգարէք.
առաջին է սա եւ վեր-
ջին Եզեկիէլ: Մանուկ կո-
չի Երեմիա ի մարգարէ-
ութիւն, Թերեւս առ ի
չգոյէ կատարելոց կամ
ծերոց որպէս Դանիէլ.
կամ զի առաքինութիւն
յամենայն հասակս պա-
տուելի է, որպէս Տի-
մոթէոս:

Եւ զկնի սոցա ի Բա-
բելոն Դանիէլ եւ Եզե-
կիէլ. արք որ ի գերու-
թեան ժամանակին մար-
գարէացան, առաջին է
սա եւ վերջին Եզեկիէլ...
Բայց թէ ընդէր կոչի
մանուկ, մի առ ի չգոյէ
ծերոց արժանաւորաց.
Երկրորդ՝ վասն վկաու-
թեան Դանիէլի. երրորդ՝
զի առ Հոգեսիրիցութիւն
նախապատիւ իսկ է, եւ
զի մի քամահիցի սա:

Եւ ապա զկնի նոցա Դա-
նիէլ եւ Եզեկիէլ ի Բա-
բելոն:

Բայց թէ ընդէր ի ման-
կութիւնն կոչի. մի եւ ա-
ռաջին առ ի չգոյէ ար-
ժանաւոր ծերոյ, երկրորդ
զի եւ վկայ լիցի Դանիէլի
նոյն հասակաւ մարգարէ-
անալոյն:

Նախադրութեան շարունակութիւնը պարզ երևում է,
որ Սկեռացու ինքնուրոյն գրածն է և տալիս է Երեմիայի
գրքի համառօտ բովանդակութիւնը՝ մի քանի նախադա-
սութեան մէջ ամփոփած:

Աբասի որդի Գրիգոր եպիսկոպոսի ժամանակը մեզ
յայտնի չէ. եթէ նա Հռովմայ Սեղբեստրոս եպիսկոպոսի
վարքի թարգմանն է, որը նոյնպէս կոչւում է Աբաս որդի
Գրիգորի և եպիսկոպոս Զորափորեցի, այն ժամանակ նա
եօթից-ութերորդ դարու հեղինակ է¹⁾, հետևապէս նոյն
ժամանակից է նաև նրա կազմած Պատճառաց գիրքը, որի
մէջ գտնում ենք Յովհան Ոսկեբերանի Մեկնութեան սկզբնա-
կան բնագրից մի հատուած: Բայց եթէ այդ ենթադրու-
թիւնն էլ ուղիղ չէ, այն ժամանակ Պատճառաց գրքի
ժամանակը իններորդ դարուց այս կողմը չի անցնում. իսկ
Ոսկեբերանի Մեկնութիւնը անկասկած աւելի շուտ է

1) Տեա. Սոկրատայ Աբուլաստիկոսի, Պատմութիւն եկեղե-
ղեցական, Վաղարշապատ, 1897, յառաջաբան, էջ ԺԷ. Համե-
մատիր նաև ИПБ и АЯ էջ 231, 232:

Թարգմանուել, հաւանական նրա միւս գրուածքների հետ, հինգերորդ դարում: Բայց մենք տեսնում ենք, որ ս. Գրքի նախադրութիւն գրողը այդ բնագրից չէ օգտուել, այլ Գոշ Մխիթարի փոփոխուած բնագրից, իսկ Մխիթարը ապրում էր ԺԲ—ԺԳ դարում,—նա մեռել է ՈկԲ—1213 թուին—, ասել է նրա գրուածքից կարող էին օգտուել միայն ԺԲ և հետեւեալ դարերի հեղինակներ:

Փաստերի այսչափ կուտակումը մեզ իրաւունք է տալիս եզրակացնելու, որ Հ. Կ. նախադրութիւններն ու ցանկերը գրել է Գէորգ Սկեռացի նշանաւոր վարդապետը, ամենաուշը 1292 թուին, բայց գուցէ նաև մի քանի տարի առաջ, միայն թէ 1270 թուականից ոչ առաջ¹: Այս իմանալուց յետոյ կարող ենք գտնել նաև, թէ որտեղից է ծագել Ն. Բիւզանդացու սխալը, որը ԺԳ դարու հայ հեղինակի գրուածքի մէջ որոնում և գտնում է մի շարք ասորաբանութիւններ, թէև ասորական գրականութեան անմիջական ազդեցութիւնը հայկականի վրայ ընդհատուել էր դարերից ի վեր: Երեմիայի նախադրութեան բաղդատութիւնը պարզ ցոյց տուեց, որ Սկեռացին յարմար գրեւորած աղբիւրը պարզօրէն արձանագրում է թեթեւ կրճատումներով և փոփոխութիւններով: Ինչ կտակած, որ այդպէս աշխատող հեղինակի գրուածքում անփոփոխ կմնային գործածած աղբիւրի ինքնուրոյն հետքերը, այս դէպքում յունական ոճեր, ասացուածքներ—որ Ն. Բիւզանդացին ի դուր չէ որոնել, շատ կգտնէր և արդարութիւն կտար Հ. Զարբանալեանին,— եթէ աղբիւրը յունական է, և ասորական—եթէ աղբիւրը ասորական է:

Դարձեալ յիշելով Մովսէս Երզնկացու խօսքերը, թէ Գէորգ Սկեռացին նախադրութիւններն և ցանկերը գրելու դէպքում «է որ յինքենէ շարժեալ և է որ ի մէնջ շարժեալ» պէտք է հարց տանք, թէ որտեղից էր այդ տե-

1 Հ. Կ. Տ. Սահակեանը (Բաղմալէպ, 1603 էջ 949) առանց հարցի մէջ խորամուխ լինելու, մի ծանօթութեան մէջ յիշել է Սկեռացու հեղինակութիւնը նախադրութիւնները վերաբերմամբ, իսկ ցանկերը համարում է ասորերէն:

առկ գրականութեան ճաշակը, որ աշակերտները դիմելով իրենց ուսուցչին խնդրեցին, որպէս զինման մի աշխատութիւն էլ ինքը կատարի: Ամենից առաջ բնական է մտածել եւթաղ Աղէքսանդրացու նոյնպիսի աշխատութեան մասին, որ նա կատարել է Ն. Կ. վերաբերմամբ և որ հընուց թարգմանուած էր հայերէն լեզուով և ապա գրտնում ենք, որ այդպիսի գրականութիւն իսկապէս հայերի մէջ գոյութիւն ունէր, հարկաւ ոչ առանց հետեոյութեան յոյն և ասորի գրականութեան: Այս գէպում առանց դիմելու օտարազգի օրինակների, լաւագոյն և յայտնի նմուշներ ունինք հէնց մեր գրականութեան մէջ: Այդ ճիւղը մեր մէջ, ինչպէս ասացինք, ամենեւին չէ ուսումնասիրուած և մենք կաշխատենք մի քանի փորձ անել այդ ուղղութեամբ: Հարուստ նիւթ կայ ամենից առաջ ո. Գրքի ձեռագրերում, ապա ամբողջական գրուածքներ կան, ինչպիսին է Գրիգոր Եպիսկոպոսի Պատճառաց գիրքը և վերջապէս ժողովածու անուան տակ յայտնի ձեռագրերում այդպիսի նիւթերի առատ պաշար կայ:

Մեսրոպ վարդապետ

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Երուսաղէմ. «Արարատի» նախորդ համարում յիշատակել էինք, որ Կ. Պօլսի պատրիարքարանը երկու կարևոր պաշտօնական անձնաւորութիւնների ընտրել էր Երուսաղէմ ուղարկելու որպէս քննիչ: Ապա իմացուեցաւ, որ Կառավարութիւնը թոյլ չը տուեց դոցա Երուսաղէմ գնալ, (պատճառն ի հարկէ անյայտ է), որի համար Սր. Օրմանեանը ազգու ղեմումներ էր արել Բ. Գրան և խնդրը տեղեկագրով ծանօթացրել, որի հետեանքն ահա գրում է «Բիւզանդիսներ»:

Երուսաղէմի վանքը քննիչներ առաքելու համար Աղգ. Պատրիարքարանի կողմէ մատուցած խնդրըն արժանացած է Բարձրագոյն հաւանութեան:—Խառն ժողովոյ առաջիկայ նստին մէջ պիտի ըլլան այս մասին վերջնական կարգադրութիւններ:

Պատրիարքարանի որոշումները շատ հաճելի չէին երեացեալ